

ԱՆՍԱ ԱՐԵՎԱՏՅԱՆ
(Արվեստագիտության թնդանություն)

**Ն. Կ. ԹԱՀՄԻԶՅԱՆ.—ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ՀԱՅ
ԵՐԱԺԾՈՒԹՅՈՒՆԸ 5—15-ՐԴ ԴՐ.
Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986 թ., 344 էջ**

Նարեկացիագիտությունը, հիրավի, վերելք է ապրում վերջին տարիներին։ Հայ միջնադարյան խոշորագույն բանաստեղծ փիլիսոփայի հմաքը, ստեղծագործության բազմարովանդակ և անսպառ բնույթը, նրա համամարդկային հնչեղությունը շարունակում են գրավել նորանոր գիտնականների, որոնց շաճքերով լուսաբանվում են Գրիգոր Նարեկացու հանձնարի դեռևս քիչ ուսումնասիրված կողմերը։ Ահա այդպիսի աշխատություններից է արվեստագիտության դոկտոր, հանրապետության արվեստի պրոֆեսոր, հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, երաժշտագետ Նիկողոս Թահիմզյանի «Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5—15-րդ դարերում» մեծածավալ մենագրությունը, որը վերջերս դրվեց ընթերցողի սեղանին։ Նշենք, որ սույն մենագրության ստեղծմանը նախորդել են վաստակաշատ երաժշտագետն լայն ճանաչման արժանացած այնպիսի ուսումնասիրություններ, ինչպիսիք են «Թամրորի Հարութինի «Ձեռնարկ արևելյան երաժշտության» (1968), «Ներսես Շնորհային երգահան ու երաժիշտ» (1973), «Երաժշտության տեսությունը հին և միջնադարյան Հայաստանում» (1977, ոռու.), «Սակար Եկմալյան» (1980), շուրջ 150 հոդվածներ գիտական տարբեր պարբերականներում և այլն։

Ուշագրավ է գրախոսվող մենագրության մտահիացումը։ Հեղինակը չի սահմանափակվել Նարեկացու լոկ երաժշտական ստեղծագործության մասնագիտական մաս-

րակրկիտ հետազոտմամբ, այլ սկզբից սեթ նապատակ է ունեցել դիտելու նրա ստեղծագործությունը լայն պատմական խորքի վրա, մետսելով տաղային արվեստի գոյացման նախադրյալներին 5-րդ դարից և վասած մինչև ուշ միջնադարը հասնող փայլուն երաժշտաբանաստեղծական դրսնորությունը։ Այդ նպատակին է ծառայեցրել հեղինակը իր երաժիշտ-միջնադարագետի ողջ փորձն ու վարդապետությունը։

Այդեն գրքի նախաբանում հատակորեն ուրվագծվում են մեղինակի հիմնական նպատակադրումներն ու հարցադրումները։ Այսուղեղ Ն. Թահիմզյանը անդրադառնում է Նարեկացու երաժշտական գործունեությանը վերաբերող պատմական և գրական աղբյուրներին (Ներսես Լամբրոնացի, Սամվել Անեցի, Հայմանավոր և այլն), այնուհետև տալիս է նարեկացիագիտության տարրեր շրջանների համարու ակնարկը, նշելով միհիթարյանների վաստակը, Ա. Չոպանացի, Ս. Արենյանի և այլոց ներդրումը։ Նախարանում հատկապես ընդգծվում են կոմիտասի՝ Նարեկացու տաղերի հայտնաբերման և ձայնագրման ուղղությամբ կատարած աշխատանքների հշանակությունը, ինչպես և Ք. Քոչշնարյանի հայ միջնադարյան երգարվեստի պատմատեսական հետազոտման մեթոդի մշակման կարևորությունը, որոնց շնորհիվ հնարավոր դարձավ գիտականորեն հաստատելու Նարե-

կացու մի քանի տաղերի երածշտական բաղադրիչի պատկանալությունը 10—11-րդ դարերին:

Հեղինակը միաժամանակ չի շրջանցում Գրիգոր Նարեկացու երածշտական ստեղծագործության ուսումնասիրմանը կապված որոշակի լուրջ դժվարությունները, նշելով դրանց սկզբունքորեն հայտաբարեկի լինելու հանգամանքը և դրական լուծման ուղիները:

Մենագրության առաջին գլուխը, իրենից ներկայացնելով հայ միջնադարյան երածշտության պատմության սեղմ, սակայն շատ հագեցված մի ակնարկ, զաղափարված է որպես ներածություն՝ գրքի կենտրոնական, կարևորագույն մասին անցնելու համար: Դարձայ պատմամշակութային լայն խորքի վրա, հեղինակը անդրադառնում է 5—15-րդ դարերի հայ երածշտության զարգացման հանգուցային դեպքերին ու դեմքերին, խոսում նեթանուական և քիստոնեական, ժողովրդական ու մասնագիտացված, տեղային ու դրացի երածշտական մշակույթների ներքին կապերի և փոխազդեցույթների մասին: Եթե վաղ միջնադարի մասնագիտացված երգարվեստի համար որոշիչ դեր խաղացին Սահակի և Մաշտոցի կողմից իրագործված եկեղեցական ուժ ձայնեղանակների կարգավորումը, երածշտածիսական մատյանների հայացումը, ապա զարգացած ավատատիրության շրջանում արդեն ծաղկում են քաջանուտ երաժշտ-փիլիստիկաներով հայտնի բարձրագույն տիպի դարրոցներ, ինչպիսիք էին Աճի, Նարեկա, Հաղպատի ու Սանահինի, Գլածորի ու Տաթևի, ինչպես և Կիլիկիայի բազմաթիվ վանքերը: Քաղաքային աշխարհիկ ու պալատական կյանքի վերելքը, ժողովրդական և ժողովրդա-պրոֆեսիոնալ արվեստների մշտական կապը եկեղեցականի հետ հանգեցրին երածշտա-բանաստեղծական նոր տեսակների գոյացմանը, ինչպիսիք էին գանձը, տաղը, որոնց կազմակորումը առաջին ներթին կապվում է Գրիգոր Նարեկացու անվան հետ: «Հիրավի, — գրում է Թամիզզանը, — Հարաստանի երածշտական կյանքում 10—11-րդ դդ. իրագործված մեծագույն տեղաշարժի ներքին բռվանդակությունը կազմում է Գրիգոր Նարեկացու ստեղծագործության կերպավորումը ու տաղերի արվեստի ծաղկումը առհասարակ: Այդ արվեստի ոլորտում է, որ քննարկվող ժամանակաշրջանում մի կողմից՝ հիանալիորեն դրսնորվում ու շարունակվում է 7—8-րդ դդ. հայկական մասնագիտացված երգաստեղծության բնականուն զարգացման ընդհատված գիծը, և մյուս կողմից՝ հաստատուն հիմքեր են ստեղծվում երա հե-

տագա թոփշքի համար» (Էջ 37): Եվ իսկապես, եթե հիշենք, որ վաղ միջնադարի պայմաններում արդեն մշակվել էին հայ հոգևոր երգարվեստի հիմնական տեսակներ՝ սկսած պարզագույն սաղմոսատիպ եղանակներից մինչև մեղեղային և կոռուրային բավական բարդ և կարագիր ուսուցող «ծանր» շարականները, որ Դավիթ Անհայտից սկսած մշակվում և հետագա գիտնական-վարդապետների կողմից լրացվում ու զարգանում էր ուսմունքը ձայնի, ներդաշնակության հենքի, երածշտության էության մասին, ապա պարզորոշ կդառնա այն պատմա-մշակութային հարուստ և պարարտ հիմքը, որը նախապատրաստեց տաղային արվեստի ճոխ ծաղկումը Նարեկացու ժամանակաշրջանում:

Մենագրության երկրորդ՝ կենտրոնական և հիմնական գլուխը նվիրված է Գրիգոր Նարեկացուն և երա ժառանգության երածշտագիտական քննությանը: Այն բացվում է հայոց պատմության «հարյուրամյա խաղաղության շրջանի» ընդհանուր քաղաքական-տեսական և մշակութային բնութագրումով: Գրիգոր Նարեկացու կյանքին և գործին վերաբերող հակիրճ ենթարածինը ի մի է բերում երա անձի և անմիջական շրջապատի մասին առ պար հայտնի բոլոր տվյալները: Մեծ հետաքրքրությամբ է կարդացվում «Մերձավոր Արևելքի գրական շարժումները 9—11-րդ դարերում և Գրիգոր Նարեկացու Ողբերգության մատյանը» ենթարածինը, որը դարձայ թույլ է տալիս դիտելու Նարեկացուն ոչ թե որպես տեղային անբացարդին մի երևոյթ, այլ իր և հայուրող ժամանակաշրջանի գրական-փիլիսոփայական միտումներին և շարժումներին խորացեն կապված և քաշատեղյակ մեծաստաղի արվեստագետն: Ընդ որում, այդ կապերն ու ընդհանրացույնները Թամիզզանը քննում է ինչպես քիստոնեական բրուգանդական, այնպես էլ՝ մահմեդական սուֆիական գրականության նյութի հիմնա վրա:

Կարևոր հշանակություն է ձեռք բերում Ողբերգության մատյանի վերաբերության հարցը հայ երգարվեստի միջնադարյան ավանդույթներին: Այս տեսանկյունով Նարեկացու ստեղծագործության հիմնական կոթողը առաջին անգամ է ներկայացվում ընթացողին: Զեռագրական նյութի մանրամասն ուսումնասիրությունը, Ողբերգության մատյանի տարբեր ընդորինակություններում բանեցված տրոհության, առոգանության և խազագրության նշանների քննությունը, հետազոտողին բերում է այն եզրակացության, որ «Ողբերգության մատյանը, ամբողջապես առած, միջնադարում ե-

դանակավոր արտասանվել ու հատվածաբար նաև երգմել է» (էջ 75):

Ուշագրավ է Ողբերգության մատյանի կապը այլ երաժշտա-ծիսական ժողովածութերի հետ: Հայտնի է, որ դեռևս 11—12-րդ դարերից Ողբերգության մատյանի առանձին գլուխմեր կամ հատվածներ մուծվել են Պատրագամատուցի, Ժամագրքի, Մաշտոցի և այլ գրքերի մեջ: Ըստ Ն. Թափմիզյանի կատարած հաշվումների վերոհիշյալ ժողովածություն կայուն տեղ գրաված այդ հատվածների թիվը հասնում է 12-ի (էջ 80): Սակայն սրանց թերևս կարելի է ավելացնել Մաշտոց գրքում հանդիպող ևս չորս հատված: Դրանք են՝ Ղ գլխի Ա հատվածը «Բարերանեալ Սստուծ երկնաւոր»: ԶԳ գլխի Ա հատվածը «Արքայ երկնաւոր...»: Գ գլուխը ամբողջությամբ «Տէ՛ր իմ, Տէր, տուիշ պարզեւեաց» և ԻԸ գլխի Ե հատվածը «Արդ, այսքանեաց անքափից հրաշից»¹ (վերջին երկու հատվածը Աղոթագրքից և Ժամագրքից են փոխանցվել Մաշտոցի մեջ): Բացառված չեն տակավին, որ երաժշտածիսական մատյանների հետագա հետազոտումը կրացահայտի Ողբերգության մատյանից նաև այլ փոխառություններ, որով ավելի կրնելանվի վերևում բերված ցուցակը: «Ողբերգության մատյանի սույն նշութերը, — եղուահանգում է հեղինակը, — միշնադրում անցնելով հայկական ծիսական գրքերի մեջ, վերջիններին միշնորդությամբ ևս կապվել են նայ հոգեւոր թվերգի ու երգեցողության տարրեր ձևերի հետ: Միշնադրանակ, սակայն, և հատկապես ուշ միշնադրի պայմաններում, Ողբերգության մատյանի ու նրա տարրեր հատվածների երաժշտական կենցաղավարման հետ կապված շատ բան նաև մոռացության է մատնութեան հետզհետև» (էջ 81):

Անցնելով Նարեկացու բուն երաժշտական ժառանգությանը, Թափմիզյանը առաջին հերթին անդրադառնում է Ողբերգության մատյանից Ժամագրքի մեջ փոխանցված «Ընկալ քաղցրութեամբ» աղոթքին: Այն երաժշտական բաղադրիչով հանդերձ տեղ է գտել 19-րդ դարի 70-ական թվականներին Էջմիածնում հրատարակված Զայնագրքայ Ժամագրքում: Մեղենիական արտաքին հյուսվածքի առումով, ըստ բոլոր եղած տվյալների, այդ աղոթքին հարում էին նարեկացու գանձերից մի քանիսը, որոնցից ոչ

¹ Մատյանի հատվածների այսպիսի միակցության նման հանդիպում, օրինակ, 16—17-րդ դդ. մի գրչագիր Մաշտոցում: Տե՛ս, Ցուցակ հայերէն ձևուգրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, կազմեց Հ Ցակրոս վ. Տաշյան, Վիեննա, 1895, էջ 813, ձև. № 360:

մեկի եղանակը չի պահպանվել: Սակայն այն փասոր, որ սրանք նս ժամանակին երգվել են (և ոչ թե, ասենք, կատարվել թիվ), ապացուցվում է երանով, որ Նարեկացու գանձերին հատուկ պարզ խազակորումն ունեն շատ շարականներ (էջ 84): Նոյն բանն են ապացուցում և գանձերի տևագույն տառերը, որոնք հողում են «Գրիգորի երգ», «Գրիգորի է երգս այս» խոսքերը:

Բազմակողմանի ու մանրակրկիտ վերլուծության նյութը են դատում Գրիգոր Նարեկացու գրչին վերագրող միակ շարականն ու տաղերը, թե՛ պատմաբանախրական խնդիրների և թե՛ երաժշտագիտական քննության առումով: Այստեղ արժարծվում են այնպիսի ուշագրավ հարցեր, ինչպիսիք են Նարեկացու տաղերի հարաբերությունը Ողբերգության մատյանին, «Հայիկ» տաղի հեղինակային պատկանելիությունն ու այդ տաղի կապը ժողովրդական ստեղծագործության հետ և այլն:

Ամբողջ մենագրության ընթացքում հեղինակն իր տեսադաշտում է պահում հայ միշնադրյան երաժշտության ամենակընճուտ խնդիրը՝ խազերի դեռևս չվերծանված լինելու պարագան, հնարավորին չափով դիմում ձեռագրական նյութին, հետաքրքիր դիտարկումներ կատարելով՝ տարբեր խազակոր մատյանների համեմատության հիման վրա:

Գրքում գետեղված են նաև միշնադրյան նեսիր Գանձարաններից քաղված Նարեկացու գանձերն ու տաղերը պարունակող ամբողջական խազակոր էջեր, որոնք ավելի ակնհայտ են դարձնում այդ երկերի խազակորման ու կենցաղավարման պարագաները:

Ուստմասիրությունից պարզվում է, որ Նարեկացու տաղերը, մասնավորապես, կենցաղավարման տարրեր պայմաններում են հարատնել Կիլիկիայում և կենտրոնական Հայաստանում: Այսպես, օրինակ, ներհանուր առմաք վերցված, կիլիկյան ձեռագրերը բնորոշվում են այդ տաղերի ավելի բարդ խազակորումով, որի դեպքում գրական խոսքի տվյալ վանկի հետ զուգորդվում են ավելի մեծ թրվով երգաչին նշաններ (էջ 98): Ինչպես նշում է Թափմիզյանը «առկա տարրերություններն արտահայտում են թե՛ կիրակված խազագրության մասնագիտական մակարդակը, և թե՛ կիլիկյան ու հայաստանակ երգաչին դարոցների ինքնահատուկ գծերը (առաջինը՝ ավելի զարդողորուն, երկրորդը՝ ավելի ամիսով մեղեղիական)» (էջ 100):

Մեծ ուշադրություն է հատկանում հեղինակակը Գրիգոր Նարեկացու մեղեղիներով

հանդերձ հասած ստեղծագործությունների արդի ձայնագրություններին (հայկական ու եւլուպական ձայնամիջերով): Խոսքը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի ըսկրգեներին կատարված ձայնագրությունների մասին է, որոնց մեջ առանձնանում են նախ Ն. Թաշչյանի և հետո՝ Կոմիտասի իրագործած ամենավատահելի և արժեքավոր գրառումները: Հենվելով թաշչյանական ձայնագրությունների երածուտաճական քննության վրա, նեղինակը եկել է այն համոզման, որ Նարեկացու «Աչքն ծով ի ծով» և «Հաւուն, հաւուն» տաղերում արտացոլված է 12—13-րդ դարերի հայ երգաստեղծության-երգեցիության կիլիկյան երածուտաճական նուրբ ճաշակը: Հետևաբար, դրանք վերանայվել, վերաեղանակավորվել են Կիլիկյանում ըստ նոր գեղարվեստական պահանջների, թեև պահպանել են մեծ բանաստեղծի մեղեդիական ոճի մի քանի էական գծերը (Եջ 109): Չափ բան են հոչել Նարեկացու տաղերի մերկա հետազոտողին Կոմիտասի ձեռագրերը, որոնք վկաներն են հայ երգարվեստի ճյուղերի, ոճերի և տեսակների լավագույն գիտակի հմտվարին որոնումների «մեղեդիական կերպարի ավելի հարազատ դրսուրմանը հասնելու հայտակությունը» (Եջ 113): Կոմիտասի ձեռագրերի և խազակուր գրչագրերի ընձեռած արտաքին տվյալների համեմատությունը թույլ է տվել Թահիմյանին ճշտելու և լրացնելու «Սայլ այն իաջներ» տաղի նախնական կառուցվածքն ու ծավալը:

Մենագրության երրորդ գլուխը կարծես կամար է ստեղծում առաջինի հետ: Սակայն ի տարբերություն առաջին գլուխ պարփակված պատմական ակնարկի, այստեղ շեշտը դրված է տաղային արվեստի զուտ երածուտաճական բաղադրիչի նախապատրաստության և հետագա զարգացման առանձնահատուկ գծերի վերլուծության վիա: Սուբստարակ աշխատությունը խարսխվում է նախնական հարցադրությունների աստիճանական ընդունման սկզբունքի վրա, որը քանի գետմ, խորանում և մանրամասնություն:

Ընթերցողներից շատերին հավանաբար ծանոթ են երկրորդ գլուխ ենթավերնագրերը, որպես նախորդ տարիներին Ն. Թահիմյանի կողմից լույս ընծայած ինքնուրուց հոդվածների խորագրեր: Այստեղ, սական, դրանք շարադրված են վերամշակված, ամփոփ տարբերակով, լրացված՝ բազմաթիվ նոր տվյալներով ու համեմատություններով: Այդ ճյուղի մերգարավումը ավելի ցցուն է դարձնում այն խնդիրները, որոնց լուարանմանը ենթարկված է ողջ շարադրանքը: Ահա այդ խնդիրներից հիմնականը. երգայ-

նության սկզբունքի դրսուրման քննությունը վաղ միջնադարի ծանր և զարդուրուն երգերից (ներառյալ հայոց հնագույն աղոթամատուցի, հանդիսավոր օրերի կանոնագույնների ոյորուն եղանակները, հնագույն Սաղմոսարան-Ծամագրքին կապված երգեցողությունները և այլն) մինչև «մեղեդիական նոր (ութայնի հին համակարգի կաշկանդումներից ձերքազատված)» ոնի բյորեղացումն ու երածուտաճական բովանդակության կազմակերպման ձևերի բարդացումը» 11—15-րդ դարերի տաղերգումների ստեղծագործություններում (Եջ 118—119):

Երկի շարժե ամենայն մանրամասնությամբ անդրադառնալ երրորդ գլուխ բովանդակությանը, խողնելով ընթերցողին ինքնուրուցի դատելու նրա արժեքների մասին: Ասեմբ միայն, որ այստեղ գետեղված են հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստի լավագույն նմուշները (նոտային օրինակներով), գրանց համակողմանի վերլուծությամբ, ինչպես և այդ նմուշները ըստեղծող երաժշտ-բանաստեղծների կյանքին ու գործունեությանը վերաբերող հետաքրքրական տվյալները: Քննելով իրենց մասնական համար չափանմուշային կոթողներ հանդիսացած այդ երկերը, հեղինակը բնորոշում է մի շարք կարկառուն շարականագիրների ու տաղերգումների տեղը ու դերը ինչպես հայ երածուտաճական պահուրման մեջ ընդհանրապես, այնպես է տաղային արվեստում մասնավորապես:

Եզրափակման մեջ ամփոփելով մենագրության հիմնական դրույթները, հեղինակը ընդգծում է, որ սպառված չի համարում իր առջև դրված խնդիրները, քաջ գիտակցելով, որ մերկա աշխատությունը միջնադարյան երածուտաճական հարուստ արվեստի ուսումնասիրության հետ կապված բազմապիսի կնճորու հարցերի հետագա լուսաբանման նախապայմաններից մեկն է: Իսկ նման հարցերը շատ են: Դրանց թվին են պատկանու առկա ձայնագրալ ժողովածուներում համապատասխան վստահելի նմուշների հայտնաբերման, դրանց հեղինակային պատկանելության ուղղման, ինչպես և հիշյալ ժողովածուների ու միջնադարյան հազարու ձեռագրերի հետազոտության հիմնա վրա միաձայնային տաղեր կոթողների վերականգնման և ուսումնափառության հետ կապված բազմապիսի կնճորու հարցերը (319):

Ի եեա, հեղինակային պատկանելության խնդրի մասին: Տվյալ խնդիրը, ավելի ճիշտ՝ հեղինակային տիպերի խնդիրը միջնադարյան կանոնական մշակույթի պայմաններում, հանդիսանում է միջնադարագիտության առաջարկ իրավունք և հետազոտված և հետագա լայն

ուսումնասիրման կարոտ հաճգուցային հարցերից մեկը, որը միանշանակ չէ և տարրեր ազգային մշակույթների պայմաններում յուրովի է դրսնորովում։ Ն. Թահմիզյանը տարրեր առիթներով բազմից անդրադառնում է այդ խնդրին գործի էջերում։ Մակայն, թեև անվիճելի են նրա դրույթները և ընդհանրացումները, մեր կարծիքով, միշտ չէ, որ մինչև վերջ համոզիչ են մի բանի որոշակի պնդումները, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է 5—6-րդ դր. հայ շարականագիրներին վերագրվող երաժշտական հեղինակումներին։ Այստեղ թերևս

դեռ շատ բան տակավին ստուգելի է մնում։ «Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5—15-րդ դարերում» մենագրությունը, անկասկած, հանդիսանում է վաստակաշատ երաժշտագետի նոր գիտական նվաճումը։ Այն, մեր կարծիքով, ամփոփում է նրա գիտական քրտնաշան պրատումների մի մեծ փուլը։ Հանդիսանալով ընդհանրացնող բնույթի խորը ուսումնասիրություն, այն նորովի է լուսաբանում հայ մշնադարյան երաժշտության լայն համայնապատկերը և այդ խորքի վրա փայլող Գրիգոր Նարեկացու երաժշտաբանաստեղծական հանձնարը։

